ԵՐԵՎԱՆԻ ԳԱՎԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ

Մանկավարժական գիտ. թեկնածու Ժ. Ի. ԳԱՆԻՆ
Ճարտարապետության թեկնածու Ն. Մ. ՊԱՊՈՒԽՅԱՆ

Խ. Աբովյանն իր մանկավարժական գործունեության վերջին հինգ տարիներն անցկացրեց Երևանում։ Նրա ղեկավարած ղպրոցի մասին արժեքավոր տեղեկություններ կարելի է գտնել Ա. Բակունցի[1], Մ. Գասպարյանի[2], Ե. Շահազիզի[3], Թ. Հակոբյանի[4] և ուրիշների աշխատություններում։ Վերջերս գրտնվել են վավերագրեր, որոնց միջոցով հնարավոր է ընդլայնել մեր պատկերացումները մեծ լուսավորչի Երևանում անցկացրած տարիների, նրա ղեկավարած ուսումնական հաստատության և վերջինիս հետ կապված՝ ժամանակի շինարարական տեխնիկայի ու արվեստի վերաբերյալ։

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո գեներալ Ի. Ֆ. Պասկևիչը միջնորդում է կայսր Նիկոլայ I-ի և կառավարության առջև՝ Անդրկովկասում ռուսաց լեզուն, առաջավոր մշակույթը և կրթությունը տարածելու նպատակով գավառական ուսումնարաններ բացելու վերաբերյալ։ 1830 թ. այդպիսի ուսումնական հաստատություններ են բացվում ծրագրված 19 կենտրոններից Թելավում, Քութայիսում, Գորիում, Շուշիում, իսկ 1832 թ. հունվարի 14-ին՝ Երևանում։ Վերջինիս համար ղգալի միջոցներ են հանգանակվել Հայկական մարզի բնակիչներից և անձամբ մարզի կառավարիչ, գեներալ-մայոր, իշխան Վ. Հ. Բեհբութովից[5]։

Նոր բացվող ուսումնարանին ժամանակավորապես հատկացվել էր քաղաքի կենտրոնից բավական հեռու, Զանգվի ձախափնյա սարահարթի վրա, Երևանի բերդում գտնվող հողե կտուրով ու հատակով մի փոքրիկ, մեկ հարկանի խոնավ շենք։ Առաջին ուսուցիչ և հաստիքավոր տեսուչ էր նշանակվել Վլադիմիր քաղաքի գիմնազիայի նախկին ուսուցիչ, Մոսկվայի համալսարանի իսկական ուսանող Ֆեոդոր Զրոևը։ Մեկ ամիս հետո պայմանները համեմատաբար բարելավվում են. գեներալ Վ. Հ. Բեհբութովի կարգադրությամբ ուսումնարանն ստանում է երկու սենյակից բաղկացած նոր շենք արդեն քաղաքի կենտրոնում, Ս. Սարդիս եկեղեցուն կից։ Սակայն շուտով պարզվում է, որ այս շենքը նույնպես պիտանի չէ ուսումնարանի համար, որովհետև հատակը հողից էր և դասասենյակները փոքր էին ու մութ։ 1834 թ. ուսումնարանի տե-

---

1 Ա. Բ ա կ ո ւ ն ց, Երկեր, Երևան, 1955, էջ 677։

2 Մ. Գ ա ս պ ա ր յ ա ն, Երևանի գավառական դպրոցը 19-րդ դարի Ա կեսում», «Սովետական մանկավարժ», 1941, № 3, էջ 80—81։

3 Ե. Շ ա հ ա զ ի զ, Դիվան խաչատուր Աբովյանի, Երևան, 1940։

4 Թ. Խ. Հ ա կ ո բ յ ա ն, Երևանի պատմությունը (1801—1879), Երևան. 1959, էջ 569—594։

5 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 98։ Բառումը նախատեսված էր 1831 թ. նոյեմբերին, բայց. ուշացել է Վ. Հ. Բեհբութովի բացակայության պատճառով.

սուչ է նշանակվում Պավել Դիմիտրիևսկին։ Ուսումնարանի համար հարմարավետ շենքի որոնումները շարունակվում էին։ Այսպես, 1835 թ. ուսումնարանի համար վարձում են արդեն երեք սենյակից բաղկացած շենք «Շահար» կամ «Հին Երևան» քաղաքամասում, Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու դիմաց, մոտավորապես այնտեղ, որտեղ այժմ գտնվում է «Մոսկվա» կինոթատրոնը։ Այս շենքը ոմն Քուփալյանի ծախսով 1837 թ. հատուկ նորոգության է ենթարկվել Նիկոլայ I-ի Երևան ժամանելու կապակցությամբ։ Հետաքրքիր է, որ 1833—1836 թթ. ուսումնարանի քննություններն ու հանդիսությունները տեղի են ունեցել Երևանի բերդի հայելապատ դահլիճում։

1838 թ. ուսումնարանը դարձյալ փոխում է իր տեղը և տեղավորվում քաղաքի նույն մասում գտնվող մեկ ուրիշ տանը, որտեղ և մնում է մինչև ուսումնարանի համար հատուկ շենքի կառուցումը[6]։ Վերջին երեք տարիների ընթացքում փոխվում են նաև ուսումնական հաստատության ղեկավարները. Պ. Դիմիտրիևսկուն փոխարինում է Մոսկվայի Լազարյան ճեմարանի սան Մելքոն Խիթարովը, այնուհետև՝ Հովսեփ Միզանդարովը և վերջապես 1840-ական թթ. ուսումնարանի տեսուչ է աշխատում Թեոդոր Հաջիֆոտովը, որից և գործերն ընդունում է Խ. Աբովյանը։ Ուսումնարանի գոյության առաջին տասնամյակի ընթացքում, այսինքն մինչև Խ. Աբովյանի գալը, նրա երկու առաջին և երկրորդ դասարաններում, ըստ Վ. Ռոմանովսկու տվյալների, սովորել են 45-ից մինչև 94 աշակերտ[7]։

Հայ մեծ լուսավորիչը դպրոցի ղեկավարությունը ստանձնեց 1843 թ. օգոստոսին, երբ ուսումնարանն արդեն մեկ տարի էր, ինչ տեղափոխվել էր հատուկ նրա համար կառուցած շենքը։ Վերջինիս շինարարությունը տևեց շուրջ չորս տարի (1838—1842)։ Բազմաթիվ արխիվային փաստաթղթեր են պահպանվել ուսումնարանի համար քաղաքի կենտրոնին մոտ տեղ ընտրելու, շինարարության ընթացքի, տիպային նախագծից և նախահաշվից տեղի ունեցած շեղումների, շինարարության թերությունների, շենքերի ընդունման և ուրիշ մանրամասնությունների վերաբերյալ, որոնց հիման վրա հնարավոր է սպառիչ պատկերացում կազմել Խ. Աբովյանի ղեկավարած ուսումնական հաստատության համակառույցի և այնտեղ գտնվող նրա բնակարանի մասին։

Խ. Աբովյանը քաղաքում մեծ հարգանք էր վայելում և իր իսկ հաղորդած տվյալների համաձայն ուսումնարանի աշակերտության թիվը խիստ ավելանում է ու հասնում մոտավորապես 200-ի։ Իսկ ըստ Վ. Ռոմանովսկու հրապարակած տվյալների 1842—1843 ուսումնական տարվա վերջում այն հասել էր 152 հոգու։ Դա աշակերտների ամենամեծ թիվն էր ուսումնարանի ստեղծման օրից։ Ինչ-ինչ պատճառներով (հիվանդությունների, համաճարակների և ուրիշ) հետագայում սովորողների թիվը նվազում է, 1846 թ. հասնելով 99-ի, 1847 թ.՝ 93-ի և այլն։

Մանկավարժական-մեթոդական նորամուծություններից բացի Խ. Աբով-

---

6 Հիշարժան է տանտիրոջ՝ Հակոբ Տեր-Հովակիմովի 1840 թ. դեկտեմբերի գրությունը՝ հասցեագրված ուսումնարանի հաստիքավոր տեսուչին։ Նա հայտնում է, որ 1836 թ. իր տարեկան նվիրատվությունը՝ միանվագ 500 ռուբլի արծաթով և շենքի 90 ռուբլի վարձը, կրկնելու է 1841 թ. ևս և հույս է հայտնում, որ այդ գումարի մի մասը կհատկացվի չքավոր աշակերտների ուսման ծախսերը հոգալուն (ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 183, թ. 2)։

7 В. Романовский, Историческая записка об Эриванской гимназии, Тифлис, 1890.

յանը հարստացրեց ուսումնարանի գրադարանը և Արևելյան Հայաստանում ստեղծվեց առաջին դպրոցական հայրենագիտական կաբինետը։ Այնտեղ տեղադրվեցին և հետագայում աստիճանաբար ավելացվեցին օգտակար հանածոների ու լեռնային ապարների նմուշներ (ծծումբ, մարմար, օբսիդիան, պըղինձ, պեմզա, սելիտրա և այլն)։



Նկ. 1

Անդրկովկասում գավառական ուսումնարանների համար անհրաժեշտ պայմաններ ապահովող համակառույցներ ստեղծելու հարցը որոշակի հիմքերի վրա էր դրվել դեռևս 1835 թ. սեպտեմբերի 1-ին, երբ բարձրագույն (կայսերական) հաստատման ներկայացվեց Անդրկովկասի գավառական ուսումնարանների համար տիպային կառույցի 1834 թ. կազմված նախագիծը։ Մեզ է հասել այդ վավերաթղթի կրկնօրինակը՝ սպիտակ թղթի վրա 1սմ-ը 2 մետրի (10,5 մմ-ը 1 սաժենի) սանդղակով, սև տուշով գծագրված և գունավորված, որը ներկայացնում է համակառույցի հատակագիծն ու գլխավոր ճակատը. հե-

ղինակը չի մատնանշված[8] (նկ. 1)։ Նրա վավերականությունը հաստատել է Անդրկովկասի ուսումնարանների վերատեսչության ճարտարապետ Հովսեփ Էնֆիաջևը։ Նախագծին կից եղել է նախահաշիվ, որն աշխատանքների ծավալի, շինանյութերի տեսակների ու քանակի, միավորի ու գումարային գների և արժեքների վերաբերյալ սովորական տվյալներից բացի պարունակում է տեղեկություններ տարբեր մասնագիտության վարպետների ու բանվորների թվի և աշխատավարձի մասին, ինչպես նաև լուսանցքներում տրված համառոտ բացատրագիր՝ աշխատանքների կատարման ընթացքի, եղանակների և կառուցամասերի վերաբերյալ։ Ծանոթագրությամբ նշված է, որ բանվորները պետք է լինեն ազատ կատեգորիայի և որ առանձին նյութեր կարող են գնվել Թիֆլիսում։ Ընդհանուր նախահաշվային գումարը կազմել է 7428 ռուբլի, առանձին մասնաշենքերինը՝ 3791 (ուսումնական մասնաշենք) և 1895 (բնակելի թևաշենքերից յուրաքանչյուրը), օժանդակ շինություններինը՝ 250 ռուբլի[9]։ Նախահաշիվն ստորագրել է շտաբս-կապիտան Լազարևը, որը, հավանաբար, նախագծի հեղինակներից մեկն է։ Այնտեղ կան նաև 1835 թ. հունիսին (նախքան հաստատումը) հատուկ հանձնաժողովի կատարած ստուգման մասնակիցների՝ գեներալ-լեյտենանտ Դատրեմի, գնդապետ Զեգե ֆոն Լաուրենբերգի, ճարտարապետներ Շաուլեմանի, Դ. և Գ. Վիսկոնտիների ստորագրությունները։

Երևանում, սակայն, նախագծի իրականացման հարցը դրվել է 1838 թ. միայն։ Անդրկովկասի ուսումնարանների վերատեսուչը դիմել է Հայկական մարզի կառավարիչ Վ. Հ. Բեհբութովին այդ նպատակով քաղաքի կենտրոնի հարթ և բաց տեղում հողամաս տրամադրելու կարգադրություն անելու խնդրանքով։ Այն ժամանակվա գավառապետ (հետագայում նահանգապետի տեղակալ) Ն. Վ. Բլավատսկին հողամաս է հատկացրել Կենտրոնական (հետագայում Կոլյուբյակինի, իսկ այժմ Շահումյանի) բուլվարից հարավ ընկած տարածքում։

Շինարարությունը կապալով հանձնվել է կապիտան Մուրաշևին և պետական հսկողություն սահմանելու նպատակով, գոյություն ունեցող կարգի համաձայն, տեխնիկական վերահսկողությունը հանձնարարվել է Երևանի ինժեներական զորամասի հրամանատար, ինժեներ, փոխգնդապետ Տուրշանինովին։ Շինարարությունը վերահսկել են նաև ուսումնարանի պատվավոր հոգաբարձու, պատվո խորհրդական Կոռնիենկոն, հաստիքային տեսուչ Ֆ. Հաջիֆոտովը և ուսուցիչ Ս. Դ. Վեքիլովը։ Վերջինս Ֆ. Հաջիֆոտովին 1841 թ. ամռան ամիսներին, նրա Դարաչիչագում (Մաղկաձոր) հանգստանալու ընթացքում մանրամասն զեկուցագրեր է ներկայացրել շինարարության ընթացքի մասին։ Քաղաքային գործադիր իշխանությունն այն ժամանակ պատկանում էր ոստիկանությանը, ուստի ուսումնարանի ղեկավարությունը դիմել է նրան՝ շինարարու-

8 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 1517, թ. 89—90։ Նախագիծը այս գործի մեջ է ընկել Երևանի գավառական ուսումնարանի կալվածքի վաճառքի կապակցությամբ։ Կովկասի ուսումնական մարզի հոգաբարձուն 1851 թ. մարտի 15-ին ուղարկել է այն Ուսումնարանների Շամախի-գերբենդյան վերատեսչությանը, որին այդ ժամանակ ենթարկվում էր Երևանի գավառական ուսումնարանը։ Փաստաթուղթը երկարատև որոնումներից հետո գտավ Ժ. Գանին։ Նախագծի գլխավոր ճակատը, առանց աղբյուրը նշելու, հրատարակել է Ն. Շահազիզը «Դիվան»-ում իբրև Երևանի գավառական ուսումնարանի ճակատ։

9 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 177, թ. 26—32։



Նկ 2



Նկ. 3

թյունն ի պաշտոնե վերահսկելու համար, սակայն վերջինս մերժել է նախագծային փաստաթղթեր չունենալու պատճառաբանությամբ[10]։

Շինարարության նկատմամբ ուշադրությունը, սակայն, չի ուղեկցվել մասնագիտական վերահսկողությամբ։ Դրա հետևանքով կառուցման ընթացքում (1841 թ. մայիսի 29) և ավարտի շրջանում (1841 թ. դեկտեմբերի 6) ակտավորվել են շինանյութի որակի և կոնստրուկցիաների մի շարք էական թերություններ և պայմանագրից ելնելով կապալառուին, իր հավատարմատար, Թիֆլիսի բնակիչ Երվանդովի միջոցով, պարտավորեցրել են վերացնել թերությունները նախահաշվի դրույթներին համապատասխան։ Երևանի համար անսովոր կղմինդրե ծածկի թերությունները հատկապես պատճառ են դարձել կառուցման ավարտից մեկ տասնամյակ էլ չանցած հիմնական և լուրջ նորոգումներ կատարելու[11]։

Ուսումնարանի ղեկավարության կողմից շենքերի ընդունումը տեղի է ունեցել 1842 թ. հունիսի 11-ին, հատակագծային և կառուցվածքային մանրամասնությունները թվարկող ցուցակով, որի տակ ստորագրել են Անդրկովկասի ուսումնարանների վերատեսչության ճարտարապետ Հովսեփ Էնֆիաջեվը և ուսումնարանի հաստիքային տեսուչ Ֆ. Հաջիֆոտովը[12]։

Հանձնման և ընդունման ցուցակները, տիպային նախագիծն ու նախահաշիվը, ինչպես և ավելի ուշ, 1851 թ. ուսումնարանի կալվածքի վաճառքի կապակցությամբ նահանգային ճարտարապետ Յա. Նաումենկոյի կատարած չափագրությունը[13] և մի շարք այլ օժանդակ փաստաթղթեր հնարավորություն են տալիս լիակատար պատկերացում կազմելու համակառույցի ճարտարապետության մասին։ Այդ նյութերի հիման վրա գծագրել ենք շենքերի հատակագիծն ու ճակատը (նկ. 2)։

Կառուցապատման ժամանակ հողամասը երկար կողմով դեպի քաղաքային բուլվարն ուղղված 27 1/2 սաժեն (57,70 մետր)×20 սաժեն 1 արշին (41 մետր) չափերի ուղղանկյուն էր (ըստ Նաումենկոյի չափագրության)։ Լայնությամբ համապատասխանում էր տիպային նախագծին, իսկ երկարությամբ ավելի էր 1 սաժենով (2,134 մետր)։ 542 քառ. սաժեն կամ 2380 քառ. մետր ընդհանուր տարածքի մոտ 30 տոկոսը շենքերն էին կազմում։ Կալվածքը սահմանակից էր Քաղաքային բուլվարին հյուսիսից, որտեղով հետագայում բացվեց Տեր-Ղուկասովի (այժմ Նալբանդյան) փողոցը (նկ. 3)։ Դեպի հարավ տարածվող դատարկ տարածությունում հետագայում ուսումնարանի այգին գրցվեց։ Արևելքում նորաստեղծ նրբանցքն էր, որը դարավերջին Ուչիլիշչնայա (Ուսումնարանային) փողոցը դարձավ, իսկ արևմուտքից անցնում էր մի ուրիշ նրբանցք, որը նաև վերոհիշյալ խոպանի կողքով ուղղված էր դեպի խորքի ախոռը (հետքերը մինչև հիմա երևում են)։ Վերջինս գծագրություններում հիշատակվում է որպես Խ. Աբովյանի ու նրա ժառանգների սեփականությունը։ Արևելքից ախոռին կից էր Հովհաննես Բաբոևի տնից ու այգուց բաղկացած կալվածքը, որը նույնպես կազմում էր խոպանի հարավային սահմանը։ Հիշյալ նրբանցքի ուսումնարանին կից հատվածը փողոցի տեսքով փակուղի դար-

10 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 142, թ. 1 և գ. 193, թ. 3, 41, 47, 68։

11 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 193, թ. 20 և գ. 201, թ. 7։ Նախագիծը կոնստրուկտիվ մանրամասներ չի պարունակում։

12 Նույն տեղում, գ. 212, թ. 3։

13 Նույն տեղում, ֆ. 19, ց. 1, գ. 1517, թ. 49—50։

ձավ։ 1853 թ. մարտի 5-ին Երևանի նահանգական դատարանի կողմից ուսումնարանին կից այգու հողամասի պատկանելիության հարցը քննելու կապակցությամբ նահանգային երկրաչափ Ստոցկին կատարել է տեղանքի երկրաչափական հանույթը, որն ուղարկվել է գնորդ Համբարձում Հախումովին։ Այն դժբախտաբար մեզ չի հասել[14]։

Այսպիսով, Երևանի գավառական ուսումնարանը տեղավորված էր Դամիրրուլաղ կամ Քարհանք կոչվող քաղաքամասի հարավ-արևմուտքում, ավելի ճիշտ՝ այդ քաղաքամասի արևմտյան, հայաբնակ Շենթաղի հարավում, մի կողմից Տեր-Հուկասովի և Գուբերնսկայա (Նահանգային, այժմ Ալավերդյանի), իսկ մյուս կողմից՝ Ուշիլիշչնայա (Ուսումնարանային) և Ապտեչնայա (Դեղատան, այժմ Էնդելսի) փողոցներով սահմանագծված թաղամասի հյուսիս-արևելյան անկյունում, այսինքն ներկայիս Գայի անվան սպայի տան համակառույցի տեղում[15]։ Այդ վայրը քաղաքում համարվում էր կենտրոնական ոչ միայն պիրքային, այլև վարչահասարակական առումով։ Նրանից արևմուտք, փակուղու մյուս կողմում (այժմյան Պետբանկի տեղում) էր նահանգապետարանը, որը մինչև 1879 թ. քաղաքային օրենսդրության կիրառումը վարում էր նաև քաղաքի վարչական գործերը։ Բուլվարից հյուսիս-արևելք Ոստիկանական հրապարակն էր ոստիկանատնով հանդերձ, որը ներկայացնում էր այն ժամանակվա քաղաքային գործադիր իշխանությունը։ Ուսումնարանի հեղինակությունն այնքան բարձր էր, որ բուլվարից արևմուտք տարածվող ուղղանկյուն (այժմյան Շահումյանի) հրապարակը Ուսումնարանային (Ուշիլիշչնայա) անվանվեց։ Այդտեղից արևմուտք տարածվում էր քաղաքի տնտեսական կենտրոնը՝ շուկայով հանդերձ։ Վարչահասարակական այդ կենտրոնի նշանակությունը հետագայում ավելի բարձրացավ վարչատնտեսական և մշակութային-կենցաղային շենքերի կառուցմամբ։

Երևանի գավառական ուսումնարանի համակառույցը բաղկացած էր քաղաքային այգու հանդեպ, հողամասի եզրին կառուցված ուսումնական շենքից, նրան երկարությամբ զուգահեռ, հողամասի անկյուններում շուրջ 9 մետր հավասար հեռավորությամբ սիմետրիկ տեղադրված բնակելի մասնաշենքերից (ֆլիդել), նրանցից հարավ տարածվող ցանկապատված բակից և վերջինիս անկյուններում տեղադրված արտաքնոցներից։ Շենքերը փողոցից մուտքեր չունեին։ Նրանց միջև տեղադրված երկու դարպասներից մտնում էին բնակարանների բակերը և այնտեղից՝ հիմնական բակը։ Ուսումնարանի մուտքը շենքի ետևից էր, այնպես որ աշակերտներն օրվա ընթացքում բնակարանային բակերը մտնելու առիթ չունեին։

Ուսումնարանի տարածքը հարթեցվել ու ցանկապատվել էր, ինչպես այդ պահանջվում էր նախագծով։ Դեռևս 1842 թ. տեսուչ Ֆ. Հաչիֆոտովը բակում կառուցել է տվել անիվով և 10 արշին (7 մետր 10 սմ) խորությամբ մի ջրհոր և ոչ մեծ փայտե մի ցախանոց, երկու պատուհաններով և մեկ դռնով[16]։

---

14 Նույն տեղում, թ. 36, 39—40, 75—76, 93։

15 Համակառույցը շինվել է 1880-ական թթ. սկզբին և պատկանել Ջանփոլադյանին։ Վարձակալման հիմունքով այնտեղ է տեղավորված եղել քաղաքային ակումբը, իսկ մինչ այդ, այսինքն ուսումնարանի գոյության վերջին շրջանում, տեղի շինություններն ու հողամասը պատկանել են Խանդամիրյանին, որն այն գնել է վերոհիշյալ Հ. Հախումովից։

16 ՀՍԱՀ ԿՊՊԱ, ֆ. Ա. ո. 1, գ. 215։

Պատկերը լրիվ փոխվել է, երբ տեսուչ է դարձել Խ. Աբովյանը[17]։ Քաջ դիտակցելով բարեկարգման առողջապահական, գեղագիտական և ուսումնական նշանակությունը, նա կարողացել է տեղի վարչական մարմիններից 1844 թ. սկզբներին ստանալ ուսումնարանի տարածքից հարավ ընկած 396 քառ. սաժեն (մոտ 1800 քառ. մետր) անմշակ տարածությունը և Անդրկովկասի ուսումնարանների վերատեսուչի թույլտվությամբ սեփական դրամով (100 ռ. ավելի) ցանկապատել է այն քարե շարվածքով և դուռ է բացել իր իսկ կառուցել տված քարե ցանկապատի մեջ, ուսումնարանի հարավային կողմում. ինչպես դատարկ հողամասում, այնպես էլ ուսումնարանի բակում առուներ է փորել բուլվարի Մամոի ջրանցքից լցվող ջրամբարից անհրաժեշտ քանակի ջուր բերելու համար, կանոնավոր ծառաշարքերով կանաչապատել է ուսումնարանի առաջը, բակը և նոր հողամասը։ Դրանց հետքերը հիմա էլ կարելի է տեսնել Սպայի տան բակում և նրան հարավից կից ամառային կինոթատրոնի տարածքում։ Թերևս փողոցի ծառերն էլ հասակակից են դրանց և աճեցվել են Խ. Աբովյանի և նրա աշակերտների ձեռքով։

Անդրկովկասի ուսումնարանների վերատեսուչին ուղղված 1845 թ. մարտի 3-ի զեկուցագրում Խ. Աբովյանը ներկայացնում է իր կատարած վերոհիշյալ բարեկարգման աշխատանքները, ուր հատկապես ուշագրավ է պարտեզի դռան նկարագրությունը իբրև «գոթական ճաշակով շատ գեղեցիկ» կառուցվածք[18]։ Նա ցանկացել է պարտեզում մշակել մերձարևադարձային և տեխնիկական բույսեր, որի համար դիմել է Անդրկովկասի տնտեսական ընկերության նախագահին՝ սերմեր տրամադրելու խնդրանքով և նույնիսկ ջանքեր է թափել բամբակազտիչ մեքենա ձեռք բերելու համար, սակայն այս բոլորը ապարդյուն է անցել։ Խ. Աբովյանի տեսչության շրջանից հետո է կառուցվել ուսումնարանի արևմտյան ցանկապատին կից քարե ցախանոցը՝ նախկին փայտե շինության փոխարեն։

Երևանի գավառական ուսումնարանի համակառույցում իր մեծությամբ, ֆունկցիոնալ և գեղագիտական առումով գերիշխողը ուսումնական շենքն էր, որով և բացատրվում է նրա կենտրոնական դիրքը կարմիր գծի վրա։ Բակային ճակատի կենտրոնից շենքի միակ մուտքը տանում էր դեպի բավականին լայն (2,60 մետր) միջանցքը, որի հետ էին կապված երեք դասարաններն ու միակ օժանդակ սենյակը։ Շենքերի տեղադրման հարցում այստեղ դժվար էր ինքնուրույնություն հանդես բերելը, քանի որ նախագիծը տիպային էր։ Այնուամենայնիվ տեղական ղեկավարությունը համարձակություն է ունեցել շենքի արտաքին չափերը փոքր-ինչ մեծացնելու (լայնությունը 0,6, երկարությունը 0,5 սաժենով) և բացվածքների թիվն ավելացնելու միջոցով ընդարձակել բոլոր բաժանմունքները։ Դրա շնորհիվ հնարավոր է եղել նույնիսկ փոխել օժանդակ բաժանմունքների ֆունկցիոնալ նշանակությունը։ Այսպես. միջանց-

---

17 Նույն տեղում, ֆ. 19, ց. 1, գ. 1517, թ. 39—40, 73—76, 82, 87։

18 Նույն տեղում, թ. 88—89։ Նախորդ տարի գերմանացի երկրաբան Հ. Վ. Արիխին ուղեկցելու պատճառով ուսումնարանից շուրջ հինգ ամիս բացակայելը Խ. Աբովյանին զրկել է ոչ միայն զգալի թվով աշակերտներից, այլև հայ համայնքի կողմից ուսումնարանի բարեկարգման համար խոստացված նյութական օգնությունից և իր հաշվին կատարած աշխատանքների հատուցման հնարավորությունից։ Բարեկարգման և այգու պահակի լրացուցիչ ծախսերի համար նա վերատեսուչին խնդրել է միջոցներ հատկացնել կամ թույլ տալ այգուց եկամուտ ստանալ այդ նպատակի համար (նույն տեղում)։ Նրա այդ խնդրանքն անհետևանք է մնացել։

քը, լայնանալով 90 սմ-ով, դարձել է հանդերձարան, ուսումնական պիտույքների պահեստը 1,30 մետրով մեծանալով՝ գրադարան։ Վերջինիս առատ լուսավորումն ապահովվել է արևելյան ճակատի մեկ լուսամուտի փոխարեն հարավային ճակատում երեքը բացելու միջոցով։

Դասասենյակները բավական ընդարձակ էին, բայց ոչ միաչափ, համապատասխանաբար՝ 94, 82, 73 քառ. մետր մակերեսով՝ առաջին, երկրորդ և երրորդ դասարանների համար։ Հավանաբար նկատի էր առնված այն հանգամանքը, որ աշակերտների մի մասը չէր հասնում ավարտական դասարան։ Երկրորդ և երրորդ դասարանները միակողմանի, առատ լուսավորություն և գրատախտակի համար (լույսը ձախից) լայնակի խուլ պատեր ունեին։ Մինչդեռ ամենամեծ, առաջին կամ նախապատրաստական համարվող դասարանը, լուսառատ լինելով հանդերձ, զրկվել է գրատախտակը լայնակի ազատ պատի վրա տեղադրելու հնարավորությունից նրա մեջտեղում դուռ բացելու պատճառով։ Հավանաբար բավարարվել են ավելի փոքր գրատախտակն այդ պատի ձախ մասում տեղադրելով, թեպետ դրանից տուժել են սենյակի աջ մասում նստածները։ Այդ դասասենյակը գրադարանի հետ անմիջականորեն կապելը պետք է որ այդպիսի զոհաբերությունն արդարացնող կարևոր մանկավարժական միջոցառում լիներ։

Շենքի ներքին բարձրության մասին ստույգ տվյալներ չունենք, բայց ճակատի չափերից ելնելով ամենայն վստահությամբ կարող ենք ասել, որ այն եղել է 4 մետրից ոչ պակաս։ 0,5×1 սաժեն (մոտ 1×2 մետր) բացվածքով, ներքին բաժանմունքների մեծությանը համապատասխան՝ 3,4 և 5 լուսամուտի առկայությունը վերոհիշյալ տվյալների հետ մեկտեղ խոսում է դասասենյակների ու գրադարանի օդառատ և լուսավոր լինելու մասին։ Անշուշտ, բոլորովին ցանկալի չէր դեպի կենցաղային նշանակություն ունեցող բակերը նայող կողքի ճակատներում լուսամուտներ ունենալը և պատահական չէ, որ նախագծով գրադարանի համար նախատեսված այդպիսի լուսամուտը չի կառուցվել։ Արևմտյան կողմում լուսամուտներ չկան, իսկ արևելյան ճակատի ընդամենը երկու լուսամուտները կառուցվել են հյուսիսային լուսամուտների անբավարար լուսավորության պայմաններում դասարանում ձախակողմյան լուսավորությունն ապահովելու ծայրահեղ անհրաժեշտությունից դրդված։

Շենքի ջեռուցումը կատարվել է դասասենյակների անկյուններից մեկում տեղադրված հոլանդական տիպի վառարաններով։ Կահավորումը ևս հատուկ նորմաներով կազմված ստանդարտ տարրերից էր բաղկացած։ Հայտնի է, որ գյուղացի ընդամենը 21 գրասեղաններն ունեցել են 4,26 մետր ստանդարտ երկարություն[19]։

Բնակելի շենքերը մեջտեղում ունեցել են ընդհանուր խոհանոց, իսկ երկու կողմում՝ սիմետրիկ դասավորված միաչափ ու միաձև բնակարաններ։ Երեք սենյակից բաղկացած յուրաքանչյուր այդ բնակարանը մեկ ուսուցչի կամ տեսուչի ընտանիքի համար էր նախատեսվել[20]։ Աջակողմյան թևաշենքը տվյալ

---

19 Նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 289, թ. 12։ Դասարանների կահույքի ձևերը, չափերն ու գույները սահմանվել են ինչ-որ «փոխադարձ ուսուցման մեթոդ» կիրառելու նպատակով (նույն տեղում, գ. 217)։

20 Նույն տեղում, գ. 177, թ. 29 և գ. 212, թ. 3։ Ուսուցիչներից բնակարանի իրավունք են ունեցել ռուսաց լեզու դասավանդողները, ուստի նախապատվությունը նրանց է տրվել (նույն տեղում, գ. 215, թ. 8)։

դեպքում հատկացվել է տեսուչին։ Ու թեև նա ուսումնարանի մերձակայքում ավելի հարմարավետ բնակարան կառուցելու մտադրություն է ունեցել, սակայն նրան հողամաս հատկացնելու համար գավառապետին ուղղված խնդրանքն անպատասխան է մնացել[21]։

Բնակարանները 42 քառ. մետր օգտակար մակերես ունեին, որի մեծ մասը՝ 35 քառ. մետրը բնակելի էր։ Մոտավորապես քառակուսի մեծ սենյակն ավելի քան 15 քառ. մետր մակերես և զույգ լուսամուտ ուներ։ Այն հանդիսանում էր ցերեկային կացարանը, դեպի ուր ուղղված էր երեք սենյակների համար ընդհանուր հոլանդական վառարանի ձևավոր ճակատը։ Մոտավորապես 9 և 11 քառ. մետր մակերես և մեկական լուսամուտ ունեցող մյուս սենյակներն ըստ պահանջի իբրև ննջարան կամ աշխատասենյակ կարող էին օգտագործվել։

Բնակարանները շուրջ 7 քառ. մետրանոց նախասենյակից բացի նույն չափի մի ընդհանուր նախամուտք ունեին, որը ցրտից պահպանում էր նաև խոհանոցը։ Դրա առկայությունը հնարավորություն է տվել իբրև բնակելի տարածություն օգտագործելու նաև բնակարանների չջեռուցվող նախասենյակները[22]։ Տարօրինակ է, որ շուրջ 11 քառ. մետր մակերես ունեցող խոհանոցը զուրկ է եղել լուսամուտից՝ նրա փոխարեն պատին կից ռուսական վառարան և խոհանոցային օջախ ունենալու պատճառով։ Նախագծում շենքի այդ պատին ընդհանրապես լուսամուտների սակավությունը (ընդամենը երկու) կից կալվածքների առկայությամբ է բացատրվում։ Հակադիր ճակատում ևս սենյակներից լուսամուտ չի բացվել բակի երթևեկի պատճառով։

Շենքերի արտաքին հարդարանքում կարևոր դեր էր հատկացվել գույներին. պատերը դեղին, լուսամուտները սպիտակ, դռներն ընկուզափայտի և կտուրները կարմիր երանգ ունեին։ Գեղարվեստական առումով առաջնային նշանակություն էին ստացել շենքերի ո՛ թե մուտքի, այլ դեպի քաղաքային այգին ուղղված ճակատները, որոնք իրենց դեղին հարթություններով, կղմինդրե կարմիր կտուրի և կանաչաղարդ միջավայրի հետ գունային ներդաշնակություն էին կազմել։ Շենքերի ճակատները թե՛ առանձին վերցրած և թե՛ կապակցող ցանկապատերի ու դարպասների հետ միասին սիմետրիկ համադրվածք էին ներկայացնում, ինչը համապատասխանում էր ժամանակի դասական պատկերացումներին։ Ի միջի այլոց, բոլոր մյուս ճակատները ևս սիմետրիկ էին, բացի կենտրոնական մասնաշենքի արևելյան ճակատից, որը, ինչպես նշեցինք, հարկադիր վերափոխման էր ենթարկվել։ Գտնվելով մի գծի վրա և կապակցվելով որմնախարսխի, ռիթմիկ լուսամուտների ու քիվերի հորիզոնական գծերի համապատասխանությամբ, համակառույցը դիտվում էր իբրև միաձույլ ամբողջություն։ Ճարտարապետական շեշտեր էին դարձել փայտե դարպասները և կենտրոնական ծավալի լուսամուտներից երեքի սանրիկաձև պսակները։ Դրանց պետք է ավելացնել նաև Գառնիի հեթանոսական տաճարի այն երեք խոյակները, որոնք դասավորված էին ուսումնական մասնաշենքի յոթ լուսամուտների տակ՝ համակառույցին արտասովոր ձևով ազգային երանգ հաղորդելու նկատառումով[23]։ Գլխավոր ճակատի հարդարանքի մաս է կազմել նաև

21 Ե. Շահազիզ, Դիվան, էջ 221։

22 Խ. Աբովյանի բնակարանի աջ կողմի հյուսիսային նախասենյակում բնակվել են սպասավորն ու անօթևան մի աշակերտ։

23 Մի խոյակ էլ Խ. Աբովյանն ուսումնարանի կաբինետում էր տեղադրել։ Այն ժամանակ «Տրդատա Թախտ» կոչված հեթանոսական տաճարից բերված այդ մասունքները տեղ էին հա-

գունազարդ ցուցանակը, որի վրա գրված էր՝ «Эриванское уездное училище»[24]։

Նախագծում թևաշենքերը նկատելիորեն ցածր են։ Հետևաբար կառուցման ընթացքում քիվերի մակարդակների հավասարեցումը կատարված է եղել մի անձնավորության կողմից, որը բաջատեղյակ էր գեղարվեստական օրենքների դասական դինանոցին։

Պատերը՝ 2:1 հարաբերությամբ քարի և աղյուսի խառը, 1 արշին (0,7 մետր) հաստությամբ, կրաշաղախով շարվածքից էին և ծեփված էին ներսից դաջով, դրսից՝ կրաշաղախով։ Առմուտքերի հարթակներն ու աստիճանները աղյուսից էին, որոնց վրա հետագայում Խ. Աբովյանը երկուական սյուներով պահվող փայտե ծածկեր շինել տվեց։ Փայտե ծածկի ջերմամեկուսիչ շերտը խարամի փոխարեն հողից էր, այնպես, ինչպես ընդունված էր տեղում։ Քառալանջ կտուրը կղմինդրապատ էր[25], ծպեղավոր տախտակամած հիմքով։ Գոտավոր (желобчатый) կղմինդրների տակ փռած կրաշաղախի թանձր շերտ կար։ 1845—1846 թթ. Խ. Աբովյանի ղեկավարությամբ տնտեսական եղանակով իրագործված հիմնական վերանորոգման ժամանակ շաղախի այս շերտը վարպետ Հարություն Պողոսովը փոխարինել է տավարի բրդով շաղախված կրի հաստ շերտով, որպեսզի ճաքեր չառաջանան։ Հատուկ հանձնաժողովն արձանագրել է, որ կտուրի անջրանցիկությունն իրոք ապահովված է[26]։ Սակայն հետագայում այն կրկին խարխլվել է փայտե հիմքում առաջացած դեֆորմացիաների, ըստ երևույթին նաև կտուրի նվազ թեքության հետևանքով։

Հատակներն ու առաստաղները տախտակապատ էին։ Հոլանդական տիպի վառարանները աղյուսաշար էին ու թիթեղապատ։ Միջնապատերը և կից օջախով ռուսական վառարանն ու ծխնելույզները նույնպես աղյուսից էին[27]։ Ներ-

---

սել հետևյալ ճանապարհով։ 1846 թ. սեպտեմբերի 24-ին Երևանի գավառապետ (հետագայում նահանգապետի տեղակալ) և միաժամանակ ուսումնարանի պատվավոր տեսուչ Ն. Վ. Բլաղատսկուց Խ. Աբովյանը ստանում է մի գրություն, որով նա ցանկություն է հայտնում բոլոր միջոցներով աշխատել պահպանել իրեն վստահված գավառի հայկական հնություններն ու պատմաճարտարապետական հուշարձանները։ Նա գրում է նաև, որ տեղի բնակիչները հաճախ կողոպտում են հին շինվածքները, թանկարժեք քարերը տանում և օգտագործում իրենց սեփական կառուցումների համար և որ իր հրամանով բռնագրավվել են Բաշ-Գառնիի չորս հիանալի բեկորներ, որոնք ուղարկվում են ուսումնարան՝ այնտեղ կաբինետ ստեղծելու նպատակով (ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 1723, թ. 1—2)։ Նա է ուղարկել նաև կաբինետի երկրաբանական ցուցոնները (նույն տեղում, գ. 256)։ Բարեբախտաբար անտիկ շրջանի քանդակազարդ այդ խոյակները չկորան և ի վերջո ընկան Հայաստանի պատմության պետական թանգարան, որտեղից էլ վերցվելով, 1970-ական թթ. սկզբին ճարտարապետ Ալ. Սահինյանի ջանքերով տեղադրվեցին վերականգնվող հուշարձանի վրա։

24 1845 թ. հունիսի 21-ին Խ. Աբովյանը նոր ցուցանակ է պատվիրել, որովհետև հինն արդեն դժվար էր կարդացվում (ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 1484, թ. 37—38)։

25 Դա բացառիկ երևույթ էր կավե կտուրներով շենքեր ունեցող Երևանի համար. ըստ երևույթին, կղմինդրները պատրաստվել են հատուկ պատվերով։ 1851 թ. շենքի նորոգման պայմանները թվելիս նշվել է, որ այդ տարիներին Երևանում առհասարակ կղմինդր չէր արտադրվում (ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 19, ց. 1, գ. 1517, թ. 65—66)։ 1845—1846 թթ. շենքերի հիմնական նորոգման ժամանակ Խ. Աբովյանը Զոլմաքչիի (Նորքի) բրուտներից 4400 գոգավոր կղմինդր է գնել կտուրից հանված հների հետ վերաշարելու նպատակով (նույն տեղում, ֆ. 1, ց. 1, գ. 227, թ. 78—89)։

26 Նույն տեղում, թ. 46, 78—80։

27 Դրանց վատորակ շարվածքի և կտուրի միջ ծխնելույզների կավե ծեփի թափվելու հետևանքով 1845 թ. գարնանը (նաև հետագայում) աջակողմյան (տեսչական) թևաշենքի խո-

քին մակերեսները դեղին էին ներկված, դռները երկփեղկանի էին, ներկված ընկուզափայտի գույնով, սպիտակ լուսամուտները ծածկվել են խլափեղկերով։ Դռների ու լուսամուտների բռնակները պղնձից էին։

Խ. Աբովյանից հետո ուսումնարանը նկատելի փոփոխություններ կրեց ոչ միայն ներքին կարգուկանոնի, այլև ճարտարապետական առումով (վերակառուցվեցին միջնապատերը, գրադարանը տեղափոխելու հաշվին ընդարձակվեց դասասենյակներից մեկը, կղմինդրե տանիքը փոխարինվեց հարթ կտուրով և այլն)։

Մեր ձեռքի տակ եղած տվյալների միջոցով հնարավոր է նաև մտովի վերականգնել Խ. Աբովյանի ժամանակաշրջանի Երևանի գավառական ուսումնարանի կահավորումը և ուսումնական ու կենցաղային շատ մանրամասնություններ։ Պահպանվել են հանգամանալից տվյալներ աշակերտական սեղանների, ուսուցչական սեղանների, աթոռների, կախիչների, պահարանների, քարտեզների, ատլասների, գրքերի և ուսումնական այլ պարագաների վերաբերյալ։ Պահպանվել են նաև Խ. Աբովյանի անձնական իրերի (կահույք, զգեստ և այլն) ցուցակները։

Մեզ հասած վերոհիշյալ արտակարգ հարուստ տվյալները հնարավորություն կտան ավելի ընդարձակելու և հարստացնելու մեծ լուսավորչի Քանաքեռի տուն-թանգարանի բաժինները։ Բարոյական պարտքը թելադրում է Խ. Աբովյանի հիշատակը հավերժացնող մի հուշատախտակ ամրացնել ներկայիս Գայի անվան սպայի տան ճակատին, որն ի դեպ հանդիսանում է նաև մշակութային և հեղափոխական նշանակություն ունեցող հուշարձան։

ЗДАНИЕ ЕРЕВАНСКОГО УЕЗДНОГО УЧИЛИЩА

Кандидат пед. наук Ж. И. ГАНИН, кандидат архитектуры Н. Ц. ПАПУХЯН

(Резюме)

Некоторые сведения о здании учебного заведения, в котором работал и жил великий армянский просветитель Х. Абовян в Ереване (1843—1848), приводятся в трудах Е. Шахазиза (1940), М. Гаспаряна (1941), Т. Акопяна (1959), Г. Оганесяна (1980) и др. Обнаруженные нами в последнее время новые архивные материалы—типовой проект 1835 г. для уездных училищ Закавказья, типовая смета, разнообразные документы о выборе места и ходе строительства, акты об отступлениях от сметы и проекта, приеме и сдаче здания, план и фасад Ереванского уездного училища, выполненный архитектором Я. Науменко в 1851 г., и т. п.—дают возможность значительно более полно судить об условиях педагогической деятельности и быте Х. Абовяна в последние пять лет его жизни.

Հանոցի մասում հրդեհ է բռնկվել։ Վերաշարված ծխնելույզները դարձյալ մեկ աղյուսի հաստություն են ունեցել։